

Ժամկետային ավանդ
«ՎՏԲ-Մանկութուն»



Կուտակային, աճող եկամտաբերությամբ, տարեկան կամ ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմամբ,

1. Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից հոգուտ երրորդ անձի՝ անչափահասի (մինչև 18 տարեկան):
2. Ավանդի համար սահմանվում են հետևյալ ժամկետները և տարեկան տոկոսադրույքները.

Սկզբնական ներդրում/ժամկետ	Լողացող տոկոսադրույք (1-15 տարի)
ՀՀ դրամ 30 000 -ից	ՀՀ ԿԲ ՎՏ + 4.00% - (12.00%)
ԱՄՆ դոլար 100 -ից	Libor USD + 8.00% - (8,58%)
Եվրո 100 -ից	Libor EUR +5.00% - (6,27%)

- 2.1. ՀՀ դրամով ավանդների տարեկան տոկոսադրույքը որոշվում է՝ ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքին գումարած 4.0% լրացուցիչ տոկոսադրույք:
 - 2.1.1. Վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ դրամավարկային կարգավորման գործիք է, որի օգնությամբ ԿԲ-ն ներգործում է միջբանկային շուկայի վրա, ինչպես նաև տոկոսադրույքներ են՝ ֆիզիկական անձանց ավանդների համար:
- 2.2. ԱՄՆ դոլարով և եվրոյով ավանդների տոկոսադրույքը որոշվում է՝ LIBOR-ի տոկոսադրույքին գումարած լրացուցիչ տոկոսադրույք՝ 8.0% ԱՄՆ դոլարով ավանդներին՝ 5.0% եվրոյով ավանդներին:
 - 2.2.1. ԱՄՆ դոլարով և եվրոյով ավանդների տոկոսադրույքը կախված է վերջին երեք ամսվա LIBOR-ի տոկոսադրույքից: LIBOR –ը Լոնդոնի միջբանկային բիրժայի կողմից սահմանված ֆինանսական միջոցների ինքնարժեքի կարգավորիչ է, որի միջոցով աշխարհի խոշոր բանկերը իրականացնում են բանկային գործառնություններ:
- 2.3. «ՎՏԲ-Մանկութուն» ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման և LIBOR-ի տոկոսադրույքի փոփոխման դեպքում, յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը, Ավանդի տարեկան տոկոսադրույքը ավտոմատ սահմանվում է ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման և LIBOR-ի նոր տոկոսադրույքին համապատասխան մակարդակին:

3. Ավանդն անսահմանափակ անգամներ լրացուցիչ մուտքագրումներով է և առանց ելքագրումների:
4. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով:
5. Ավանդի ժամկետը որոշում է Ավանդ ներդրողը՝ 365 օրից մինչև 5475 օր (1-15 տարի):
6. Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը՝ 30 000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար, 100 եվրո:
7. Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են յուրաքանչյուր տարի կամ ժամկետի ավարտին՝ տարեկան կապիտալացմամբ:
8. 3 մլն. ՀՀ դրամ, 10 000 ԱՄՆ դոլար, 6 000 եվրո և ավելի ավանդների ներդրման կամ այդ գումարին կուտակումների արդյունքում հասնելու դեպքում՝ պայմանագիրը կնքելու պահին 3. կետում նշված տոկոսադրույքներին գումարվում է (+)0.5% տարեկան տոկոսադրույք (կուտակման դեպքում ավելի բարձր տոկոսի հաշվեգրումն ավտոմատ կերպով իրականացվում է սույն կետով սահմանված գումարային սահմանի անցման հաջորդ օրվանից):
9. Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև ավանդի մարման ժամկետից 60 օրացուցային օր առաջ (ներառյալ ավանդի վերադարձի օրը):
10. Ավանդի առավելագույն չափը սահմանվում է 50.0 մլն ՀՀ դրամ, 100 000 ԱՄՆ դոլար, 50 000 եվրո:
11. Ավանդը (համապատասխան տոկոսային եկամտի հետ միասին) վերադարձվում է պայմանագրով սահմանված ավանդի ժամկետի վերջին օրը, ավանդի գումարը փոխանցելով Բանկում Ավանդատուի անունով բացված բանկային կամ քարտային հաշվին, առանց կանխիկացման սակագնի կիրառման:
12. Բանկը Ավանդատուին՝ ներդնողին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,

- քարտի սպասարկման վճար՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
- Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝ Բանկի համապատասխան որոշմամբ:

13. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջի դեպքում.

13.1. Եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը փոքր է 365 /մերառյալ/ օրից Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:

13.2. Եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը մեծ է 365 օրից՝ Բանկը կատարում է տոկոսների հաշվարկ պայմանագրով սահմանված տոկոսադրույքով:

14. Ավանդային պայմանագիրը կարող է երկարաձգվել բազմակի անգամ մինչև 3-րդ անձի չափահասության լրանալը՝ ավանդի գծով տվյալ պահին գործող պայմաններով:

15. Ավանդի ձևակերպումն իրականացվում է Ավանդատուի՝ իր և 3-րդ անձի անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:

16. «ՎՏԲ-Մանկություն» ժամկետային ավանդը ապահովագրված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով: